ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՏՕՆԻ ԲԱՑՈՒՄԸ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Երեկ, հոկտ. 13-ին, Էջմիածնում պաշտօնապէս սկսուեցին հայ տառերի գիւտի 1500-ամեայ և հայ տպագրութեան 400-ամեայ յոբելեանական հանդէսները։

Այդ առիթով աւելորդ չենք համարում ստորև առաջ բերել այն ծրագիրը, որով սկսուեցին հանդէսները Էջմիածնում։

Հոկտ. 12-ին, երեկոյեան Նորին Վեհափառութիւնը հանդիսաւոր թափօրով իջաւ Մայր Տաճար, ուր տեղի ունեցաւ նախատօնակ ս. Թարգմանչաց յիշատակին։

Շաբաթ, ս. Թարգմանչաց տօնին, հոկտ. 13-ին, հանդիսաւոր գնացքով Նորին Վեհափառութիւնը մեկնում է Օշական, ուղեկցութեամբ ամբողջ միաբանութեան և պատգամաւորութիւնների։

Պատարագ ս. Մեսրոպի գերեզմանի վրայ.

Հայրապետական մաղթանք։

Պատարագից յետոյ պատգամաւորների բանախօսութիւններ, հեռագրների և ուղերձների ընթերցում ս. Մեսրոպ եկեղեցու բակում։

Այսօր, կիրակի հոկտ. 14-ին Մայր Տաճարի Իջման սեղանի վրայ կը կատարուի հանդիսաւոր պատարագ, ապա հոգեհանգիստ գրի և տպագրութեան վաստակաւորների յիշատակին։

Այսօր պատարագից յետոյ կը լինի ցերեկոյթ երաժշտութեամբ և երգեցողութեամբ։

Շաբաթ և կիրակի երեկոները հրավառութիւն և երաժշտութիւն վանքի և ճեմարանի բակում։

Այս ծրագրով սկսուեց յոբելեանական տարին Էջմիածնում, երեկուանից, հոկտեմբ. 13-ից և տևելու է մինչև 1913 թուի հոկտ. 12-ը, երբ և նոյն ս. Թարգմանչաց տօնին փակուելու է յոբելեանական տարին Էջմիածնում, ազգային հաստատութիւնների մասնակցութեամբ։